



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻԻ  
ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք  
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., 2.1, Հեռ.  
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

N 621  
24 հոկտեմբեր 2018թ.

**ՀՀ ԼՈՌԻԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
ՄԱՐԶՊԵՏ  
ՊԱՐՈՆ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Թումանյան համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 39-Ա - 46-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  
ՉԱՎԱՐՅԱՆ**

**Լ Ե Վ Ո Ն**

Կադ. Աշխարակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան  
098 048 046



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018 թվականի N 39-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18 -Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով՝  
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.  
Հաստատել Թումանյան համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 18-ի արտահերթ նիստի  
օրակարգը.

1. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18 -Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՏՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆՄԱՍԻՆ
3. Ի ԿԱՏԱՐՈՒՄՆ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ՝ Ս/Թ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՂԵՏՆԵՐԻ (ՏԵՂԱՏԱՐԱՓ ԱՆՁՐԵՎ ԿԱՐԿՈՒՏ) ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԶԱՓԸ ԳՆՀԱՏԵԼՈՒ ԵՎ ԱԿՏԸ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՑ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՈՒՐԻԿ ՎՐՈՒՅՐԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՆԿԱՏՄԱՐ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԵՑ ԴԱՄՏԻԱՐԱԿ ԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՀՆԻՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԿ ԱՆՊԱՏԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
6. 06-004-0016-0058 ԾԱԾԿԱԳՐԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՑՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
8. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -7  
ԳԱՆՏՅԱՆ ԳՈՐ

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԵԶՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԵԼԻՔՆԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ


ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018 թվականի N 40-Ա

**ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՏՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 5-րդ ենթակետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Անդունելի գիտություն Թումանյան համայնքի 2018 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը՝ համամաձայն հավելվածի:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԽԵՂՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄՆԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀԿԵՐՈՅԱՆ ՄԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԸՐԱՆՏ

ՎԱՂՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՂՈՐԴՈՒՄ  
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2018թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում բյուջեն կատարվել է եկամուտների գծով 90,4%-ով, նախատեսված 90222,9 հազ.դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 81583,1 հազ.դրամ: Սեփական եկամուտները ( հարկային եկամուտներ և տուրքեր, այլ եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 24579,3 հազ.դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 15879,6 հազ.դրամ, կատարման տոկոսը՝ 64,6 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (« պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ ) նախատեսված էր 65643,6 հազ. դրամ, տրվել է 65703,5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100,0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները 65643,6 հազ. դրամ, որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0% և 60,0 հազ. դրամ տրվել է որպես այլ դոտացիա :

1. Վարչական մասի եկամուտները

2018թ-ի երրորդ եռամսյակի բյուջեն վարչական մասով նախատեսված էր 90222,9 հազ.դրամ եկամուտ, փաստացի մուտքերը կազմել են 81583,1 հազ.դրամ, կատարման տոկոսը՝ 90,4 % : Սեփական եկամուտները ( հարկային եկամուտներ և տուրքեր, այլ եկամուտներ)

24579,3 հազ.դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 15879,6 հազ.դրամ, կատարման տոկոսը՝ 64,6 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (« պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ ) նախատեսված էր 65643,6 հազ. դրամ, տրվել է 65703,5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100,0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 65643,6 հազ. դրամ, որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0%, 60,0 հազ. դրամ տրվել է որպես այլ դոտացիա:

1) Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2018 թ-ի երրորդ եռամսյակում նախատեսված էր 7634,1 հազ. դրամ , փաստացի մուտքերը կազմել են 4734 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 62,0%, նախորդ տարվա համեմատ նվազել է:

2) Գույքահարկ

Գույքահարկ համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար նախատեսված էր 300,0 հազ. դրամ , փաստացի մուտքերը կազմել են 342,8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 114,3 %, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր 6000,0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 4370,3 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 72,8 %, որը նախորդ տարվա համեմատ նույնպես նվազել է:

3) Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 804,2 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 695,9 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 86,5 %, որը նախորդ տարվա համեմատ նույնպես նվազել է:

4) Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2018 թ- ի երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 11681,9 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 5736,4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 49,1 % :

5) Պաշտոնական տրանսֆերտներ

Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (« պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված էր 65643,6 հազ. դրամ, տրվել է 65703,5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100,0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող

դոտացիաները հազ. 65643,6 դրամ, որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0%, 60,0 հազ. դրամ տրվել է որպես այլ դոտացիա:

2. Բյուջեի ընթացիկ ծախսերի կատարողականը ըստ ոլորտների

Բյուջեի վարչական մասի 2018թ-ի բյուջեի ծախսերը երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 99497,8 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 71896,7 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 72,3 %:

3. Ըստ ոլորտների ծախսերը կատարվել են

1) Բաժին(Ոլորտ)1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝

Ծրագիր

Համայնքի աշխատակազմի պահպանություն, հանրային որակյալ ծառայությունների մատուցում

Միջոցառումներ: Ծառայություններ

Թումանյան քաղաքի աշխատակազմի պահպանության, Աթան, Ահնիձոր, Լորուտ, Մարց, Շամուտ, Քարինջ բնակավայրերի վարչական ղեկավարների պահպանության ծախսեր՝

նախատեսված - 43300,0 հազ. դրամ

փաստացի ծախս - 34448,2 հազ. դրամ

կատարման տոկոս - 79,6 %:

2) Բաժին(Ոլորտ)4. Տնտեսական հարաբերություններ՝

Ծրագիր

Աջակցություն գյուղատնտեսության և բուսաշրջության զարգացմանը, ճանապարհային տնտեսության վիճակի բարելավմանը

Միջոցառումներ1.: Ծառայություններ

Դրամաշնորհի տրամադրման միջոցով աջակցություն <<Լոռի>> մարզային ծրագրին

նախատեսված - 250,0 հազ. դրամ,

փաստացի ծախս չի կատարվել, կատարման տոկոս - 0 %:

Միջոցառումներ2 : Ծառայություններ

Դրամաշնորհի տրամադրման միջոցով աջակցություն ճանապարհային տրանսպորտի գծով միջոցառումների իրականացմանը

նախատեսված - 6300,0 հազ. դրամ

փաստացի ծախս - 5900,0 հազ. դրամ

կատարման տոկոս - 93,7%:

Միջոցառումներ3 : Ծառայություններ

Դրամաշնորհի տրամադրման միջոցով աջակցություն անասնաբուժական ծառայության գծով միջոցառումների իրականացմանը, որը սակայն չի կատարվել բազմաթիվ տարակարծիք պատճառներից ելնելով:

3) Բաժին(Ոլորտ)5. Շրջակա միջավայրի պաշտպանություն

Ծրագիր

Համայնքի բոլոր բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում

Միջոցառումներ: Ծառայություններ

Դրամաշնորհների տրամադրման միջոցով համայնքի բոլոր բնակավայրերում մատուցվել է աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ

նախատեսված - 4000,0 հազ. դրամ,

փաստացի ծախս - 4000,0 հազ. դրամ

կատարման տոկոս - 100,0 %:

4) Բաժին(Ոլորտ)6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն

**Ծրագիր**

**Միջոցառումներ 1: Ծառայություններ**

Ջրամատակարարում:

Դրամաշնորհների տրամադրման միջոցով համայնքի բոլոր բնակավայրերում մատուցվել է ջրամատակարարում:

նախատեսված – 5200,0 հազ. դրամ,

փաստացի ծախս – 3262,7 հազ. դրամ

կատարման տոկոս – 62,7 %:

**Միջոցառումներ 2: Ծառայություններ**

Ներնակավայրային փողոցների լուսավորում

Ներքնակավայրային կենտրոնական փողոցների լուսավորության համակարգերի էներգետիկ սպասարկման ծառայությունների մատուցում

նախատեսված – 2050,0 հազ. դրամ,

փաստացի ծախս – 1101,8 հազ. դրամ

կատարման տոկոս – 53,7 %:

**5) Բաժին(Ոլորտ)9. Կրթություն**

**Ծրագիր**

Համայնքում նախադպրոցական կրթության, արտադպրոցական դաստիարակության և կրթության օժանդակ ծառայությունների զարգացում

**Միջոցառումներ: Ծառայություններ**

Թումանյանի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի գործունեության ապահովում, պայմանների բարելավում

Լորուտի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի գործունեության ապահովում, պայմանների բարելավում

Քարինջի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի գործունեության ապահովում, պայմանների բարելավում

Աթանի նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայության պահպանում

Ահնիձորի նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայության պահպանում

Մարցի նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայության պահպանում

Շամուտի նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայության պահպանում

Թումանյանի մանկական արվեստի դպրոց ՀՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների մատուցում

նախատեսված – 24030,0 հազ. դրամ

փաստացի ծախս – 21884,0 հազ. դրամ

կատարման տոկոս – 91,1%:

**6) Բաժին(Ոլորտ)10. Սոցիալական պաշտպանություն**

**Ծրագիր**

Աջակցություն համայնքի անապահով և զինվորի ընտանիքներին

**Միջոցառումներ: Տրանսֆերտներ**

Համայնքի անապահով ընտանիքներին օգնություն տրամադրվելու միջոցով հոգսերն աստիճանաբար թեթևանում են

նախատեսված – 1500,0 հազ. դրամ

փաստացի ծախս – 1300,0 հազ. դրամ

կատարման տոկոս – 86,7 %:

**4. Կ Ա Պ Ի Տ Ա Լ Ծ Ր Ա Գ Ր Ե Ր Ե Վ Մ Ի Զ Ո Ց Ա Ռ Ո Մ Ն Ե Ր**

**1) Բաժին(Ոլորտ)1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝**

**Ծրագիր**

Համայնքապետարանի աշխատանքային պայմանների բարելավում

**Միջոցառումներ 1:** Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) միջոցառումներ  
Վարչական սարքավորումների ձեռքբերում

Դռների և լուսամուտների փոխարինում, տախիչ սարքի ձեռք բերում

նախատեսված – 1100,0 հազ. դրամ  
փաստացի ծախս – 1059,4 հազ. դրամ  
կատարման տոկոս – 96,3 %:

**Միջոցառումներ 2:** Համայնքի բնակավայրերում շենքերի և շինությունների կապիտալ  
վերանորոգում և պահպանում

նախատեսված – 8028,1 հազ. դրամ  
փաստացի ծախս – 1235,2 հազ. դրամ  
կատարման տոկոս – 15,4 %:

2) Բաժին (Ոլորտ) 4. Տնտեսական հարաբերություններ  
Ծրագիր

Ներբնակավայրային ճանապարհների վերանորոգում

**Միջոցառումներ 1:** Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) միջոցառումներ

նախատեսված – 4500,0 հազ. դրամ  
փաստացի ծախս 2710,0. դրամ  
կատարման տոկոս 60,2 %:

3) Բաժին (Ոլորտ) 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն  
Ծրագիր

Քարինջ, Լորուտ բնակավայրերի ներքին ջրամատակարարման համակարգի վերանորոգում

**Միջոցառումներ 1:** Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) միջոցառումներ

Քարինջ բնակավայրի ներքին ջրամատակարարման համակարգի վերանորոգում

Լորուտ բնակավայրի ներքին ջրամատակարարման համակարգի վերանորոգում

նախատեսված – 2500,0 հազ. դրամ  
փաստացի ծախս – 0 հազ. դրամ  
կատարման տոկոս – 0%: -. դրամ

**Միջոցառումներ 2:** Փողոցների արտաքին լուսավորության համակարգի բարելավում

Թումանյան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության համակարգի բարելավում

Մարց բնակավայրի փողոցների արտաքին լուսավորության համակարգի բարելավում

նախատեսված – 970,0 հազ. դրամ  
փաստացի ծախս – 958, 0 հազ. դրամ  
կատարման տոկոս – 98,7 % հազ. դրամ

4) Բաժին (Ոլորտ) 9. Կրթություն  
Ծրագիր


Քարինջի Նախադպրոցական Կրթության որակի բարելավում

**Միջոցառումներ:** Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) միջոցառումներ

Քարինջի Նախադպրոցական Ռիսուեմական Հաստատություն ՀՈԱԿ-ի շենքային պայմանների  
բարելավում

նախատեսված – 6200,0 հազ. դրամ  
փաստացի ծախս – 6082,0 դրամ  
կատարման տոկոս – 98,1 %:

Թումանյան համայնքի ղեկավար՝



/Լ. Զավարյան/



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք  
ՀՀ Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 41-Ա

Ի ԿԱՏԱՐՈՒՄՆ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ՝ Ա/Թ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ  
ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՂԵՏՆԵՐԻ (ՏԵՂԱՏԱՐԱՓ ԱՆՁՐԵՎ, ԿԱՐԿՈՒՏ) ՀԵՏԵՎԱՆՔՈՎ  
ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՉԱՓԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ  
ԵՎ ԱԿՏԸ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 17/10/2018թ. թիվ 101/108.3.6/6819-18 գրությունը՝  
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ս/թ սեպտեմբերի 10-ին Թումանյան համայնքի Թումանյան քաղաքում տեղի ունեցած  
աղետների/տեղատարաի անձրև, կարկուտ/հետևանքով բնակիչների բնակարանների տանիքներին  
պատճառված վնասի չափը գնահատող հանձնաժողովի կազմը.

- 1) Հանձնաժողովի նախագահ՝ Մխեթյան Մարիամ - առաջին կարգի մասնագետ
- 2) —//— անդամ Խեչոյան Մերուժան - ավագանու անդամ
- 3) —//— Ծահվերդյան Սեյրան - ավագանու անդամ
- 4) —//— Պետրոսյան Էդգար - առաջին կարգի մասնագետ
- 5) —//— Թորոսյան Նորիկ <<Թումանյանի քաղաքային համայնքի

կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն:

2. Հանձնաժողովի նախագահ Մ. Մխեթյանին՝ սեղմ ժամկետում ՀՀ Լոռու մարզպետարան  
ներկայացնել հանձնաժողովի կողմից կազմված ակտը:

Կողմ - 7

Դեմ - 0

Չեղնակալի - 0

ԳԱԼՍՅԱՆ ԳՈՐ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱԿԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՄԱՐԳՍՅԱՆ ԸՐԱՆՏ

ՎԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԼԵԿՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԳԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 42-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՑ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՈԱԴԻԿ ՎՐՈՒՅՐԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՆԿԱՏԱՄԱՐ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՏՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԵՖ ԴԱՍՏԻԱՐԱԿ ԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի պետի 07.02.2018թ. թիվ 60/2-811 գրությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Թումանյան համայնքի Մարց գյուղի բնակիչ Ռադիկ Վրույրի Հովակիմյանի վարքագծի նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով, Թումանյան համայնքի ավագանի Տիգրան Մխիթարյանին կցել շեֆ դաստիարակ:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ


ՄԻՒԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱԿԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 43-Ա

**ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՀԵԻՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՄԵԿ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Թումանյան համայնքի Անկիձոր գյուղի հիմնական դպրոցի տնօրենի 29.08.2018թ, թիվ 25 գրությունը՝  
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Համաձայնություն տալ Մարիամ Սարիբեկի Հովսեփյանին Թումանյան համայնքի Անկիձոր գյուղի հիմնական դպրոցի կառավարման խորհրդի կազմում ընդգրկվելու համար:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՐ

ԽԵԶՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԻՒԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ


ՇԱՀԿԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

*(Handwritten signatures of the seven members of the community council)*



**ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 44-Ա

06-004-0016-0058 ԾԱԾԿԱԳՐԻ ՏՆԱՄԵՐԶ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-19-րդ հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ, 52-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ Քաղաքաշինության մասին օրենքով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01/06/2010 թ. թիվ 186-Ն հրամանով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 13/04/2006 թվականի թիվ 719-Ն որոշումը և որակավորված անձի կողմից տրված հողամասի հատակագիծը՝  
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի վարչական սահմաններում գտնվող Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի 1-ին փողոց, 1-ին նրբանցք, թիվ 32 հասցեում, 06-004-0016-0058 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,05184 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման տևամերձ հողամասի նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և այն ՀՀ կառավարության 13/04/2006 թվականի թիվ 719-Ն որոշմամբ փոխանցված է համայնքին, առաջնորդվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01/06/2010 թ. թիվ 186-Ն հրամանի 2-րդ գլխի 5-րդ կետով նշված հողամասի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:
2. Նշված հողամասը ենթակա է գրանցման Թումանյանի համայնքապետարանի անվամբ:
3. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ դիմելու ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ աշխատակազմի Լոռու մարզային տարաբաժանում նշված հողամասի համար սեփականության վկայական ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՐ

ԽԵԶՈՅԱՆ ՍԵՐՈՒԺԱՆ


ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄՆԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԼԵՎՈՆ ԶԱԿԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ Ի ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք  
ՀՀ Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 45-Ա**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**







Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 627-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286-Ն որոշմամբ, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և հիմք ընդունելով Ռոբերտ Գալստյանի դիմումը՝ հողամասի վարձակալության իրավունքի առաջաճառքի 26.12.2006թ-ին կնքված պայմանագրի /սեղանամատյան 2336/ հիմքով՝ իր անվամբ վարձակալության իրավունքով հաշվառված համայնքի 0.722 հա խոտհարքի նկատմամբ վարձակալության իրավունքը վաղաժամկետ դադարեցնելու և գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով գնելու մասին՝  
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Թումանյան համայնքի սեփականություն համարվող Մարց գյուղում «Հիքատակ» հանդամասում գտնվող 0.722 հա /վկ.0103379, տրվ.11.01.2007թ./ գյուղատնտեսական նշանակության խոտհարքը ուղղակի վաճառքով, տվյալ պահին գործող կադաստրային արժեքով՝ 382660 ( երեք հարյուր ութսուն երկու հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամով սեփականության իրավունքով Ռոբերտ Գալստյանին օտարելուն:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ   
ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ   
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ   
ՇԱԿԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ   
ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ   
ՎԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ 



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք  
ՀՀ Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 46-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ  
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 26-ի «Թումանյան համայնքի 2018թ. քյուջեն հաստատելու մասին» թիվ 54 -Ն որոշումը, հիմք ընդունելով Անհիժոր բնակավայրի վարչական ղեկավարի զեկուցագիրը, Անհիժոր գյուղի բնակիչ Արսեն Սամվելի Թաթոյանին հրդեհի պատճառով հասցված վնասը հնարավորին չափով վերականգնելու համար դրամական օգնություն տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը և Թումանյան համայնքի Անհիժոր գյուղի բնակիչ Արսեն Սամվելի Թաթոյանի դիմումը՝  
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Թումանյանի համայնքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ քյուջեից /հոդված 4729 / Թումանյան համայնքի Անհիժոր գյուղի սոցիալապես անապահով բնակիչ Արսեն Սամվելի Թաթոյանի տրամադրել դրամական օգնություն՝ 300000 ՀՀ դրամ(երեք հարյուր հազար):
2. Թումանյանի համայնքապետարանի գանձապահին՝ լիազորել Արդշինինյվեստ բանկ Ալավերդու մասնաճյուղից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ


ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԼԵԿՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ